Հռիգուս Զ. երրորդ՝ որդի Ֆորկան առաջնոյ՝ սկսաւ յամի Տեառն ՌՄ. ինքնակալեալ ամն ԼԻ. և ամիս Գ: Յաւուրս սորա Վենէցիանքն առին զԿոստանդնուպօլիս, և թագեցան 'ի պապէն. և ԾԷ. ամ կալան Ֆռանկքն 'ի Յունաց զքաղաքն: Յաւուրս սորա թագեցաւ Լևոն արքայ Հայոց 'ի Կիլիկիայ 'ի թուին Հայոց ՈԾԳ. և Լևոն թագաւորն էառ զԱնտիոք 'ի Տուկէն:

Օգոս Հինգերրորդ սկսաւ յամի Տեառն ՌՄԸ. ինքնակալեալ ամն Գ: Դարձեալ ընկալաւ սա թագ 'ի պապէն. բայց հակառակ եղև Պապոյն. զոր բանադրեաց զնա Պապն, բայց ոչ կասեցաւ: Իսկ Պապն ըստ ընտրողաց կայսերացոյց զՖորիկն, և բերեալ 'ի Հռոմ և թագեաց զնա պատուով:

Ֆորիկ երկրորդ՝ որդի Հռիգուսի ինքնակալի Սիկիլիոյ՝ սկսաւ յամի Տեառն



Հայ մատենագրութեան թուանշային գրադարան